**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Պատրաստել է _____________**
**ուղղությամբ շրջանավարտների պատրաստվածության մակարդակի և բովանդակության մինիմումի պետական պահանջներին համապատասխան և «ՀՌՀ ԱՈՒՄԿ» Կանոնակարգով:**

**Հաստատում եմ՝**
**Ինստիտուտի տնօրեն_________**
**Արամյան Ժ.Բ.**
**"2" 18 հուլիսի 2023 թ.**

**Ինստիտուտ՝ Տնտեսագիտության և բիզնեսի**

**Ամբիոն՝ Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների**

***Հեղինակ՝*** **Տիգրանյան Վարսիկ Իշխանի, տ.գ.թ.**

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԿՈՄՊԼԵՔՍ

**Առարկա՝ Պետության հակապարբերաշրջանային քաղաքականություն**

Մագիստրատուրայի համար

**Մասնագիտացում՝ Քաղաքական տնտեսագիտություն**
**Ուղղություն՝ Տնտեսագիտություն**

**ԵՐԵՎԱՆ 2023**

**1.Անոտացիա**

Համաշխարհային տնտեսության շարունակական փոփոխությունները հանգեցնում են տնտեսական տատանումների, ցնցումների և ճգնաժամերի, ինչը կարող է կարգավորվել և վերահսկվել պետության հայեցողական (դիսկրեցիոն) հակապարբերաշրջանային քաղաքականության միջոցով: Գործարար ակտիվության տատանումների ուղղությամբ՝ կարճաժամկետում, պետության տնտեսական քաղաքականության արդյունավետ գործիքների կիրառումը, հնարավորություն է տալիս բացահայտել և վերանայել տատանումների առաջացման պատճառները, պայքարել տնտեսական կառուցվածքի անցանկալի փոփոխությունների դեմ, և ազդել տնտեսական ցիկլի խորության ու տևողության վրա: Նման կարգավորման նպատակն է հասնել կայուն, հավասարակշռված բաշխման, որի պարագայում երկարաժամկետում ազգային տնտեսությունը հնարավոր առավելագույն չափով կմոտենա ՀՆԱ-ի պոտենցիալ մակարդակին՝լրիվ զբաղվածությամբ, կայուն, ցածր գնաճով:

**2. Ուսանողների սկզբնական գիտելիքերի, կարողությունների և հմտությունների մակարդակի նկատմամբ պահանջները**

Դասընթացն ուսումնասիրելու համար ուսանողին անհրաժեշտ են օտար լեզվի և համակարգչային՝ MS Office Word, Excel, Power Point, ծրագրերի իմացություն, քննադատական և համեմատական վերլուծություններ, մեկնաբանություններ կատարելու ունակություններ, ինչպես նաև բազային գիտելիքներ «Մակրոտնտեսագիտություն», «Տնտեսության պետական կարգավորում» դասընթացներից:

**3. Բովանդակություն**

**Դասընթացի նպատակն ու խնդիրները**

«Պետության հակապարբերաշրջանային քաղաքականություն» առարկայի նպատակն է մատուցել հակապարբերաշրջանային քաղաքականության տեսական և մեթոդաբանական հիմքերի վերաբերյալ բազմակողմանի գիտելիքներ և ձևավորել գործնականում դրանց կիրառման հմտություններ ու կարողություններ, որոնք բազա կհանդիսանան նաև տնտեսագիտական կիրառական այլ առարկաների յուրացման և գիտելիքների ամրապնդման համար:

Դասընթացի ուսումնասիրման խնդիրներն են.

- Պարբերաշրջանային փուլերի ուսումնասիրությունը՝ բնութագրող ցուցանիշների ներկայացմամբ,
- Տնտեսական ճգնաժամերի էվոլյուցիոն վերլուծությունը,
- Հակապարբերաշրջանային կարգավորման անհրաժեշտության հիմնավորումը համապատասխան տնտեսական և տնտեսաչափական մոդելների քննարկմամբ,

- Հակապարբերաշրջանային կարգավորման ֆիսկալ և մոնետար գործիքների կիրառական նշանակության հիմնավորումը,
- Տնտեսական աճի ապահովման լրացուցիչ խթանների բացահայտումը, ներդրման հնարավորությունների քննարկումը,
- Հակապարբերաշրջանային քաղաքականության միջազգային փորձի ուսումնասիրությունը,
- Հակապարբերաշրջանային միջոցառումների արդյունավետությունը գնահատող ցուցանիշների համակարգի ուսումնասիրությունը:

**4.Առարկայի բովանդակության յուրացման մակարդակի նկատմամբ պահանջները (ինչ կարողություններ (գիտելիքներ, հմտություններ և ունակություններ) պետք է ուսանողի մոտ ձևավորված լինեն տվյալ առարկան անցնելուց ՀԵՏՈ)**

**Գիտելիքներ.**

- Ունի շուկայական տնտեսության պարբերաշրջանայնության վերաբերյալ տեսական գիտելիքներ,
- Ունի տնտեսական տատանումների առաջացման պատճառների մասին գիտելիքներ,
- Ունի տնտեսական պարբերաշրջանների ձևավորման մեխանիզմների վերաբերյալ գիտելիքներ,
- Գիտի տնտեսական ճգնաժամերի ձևավորման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները,
- Ունի տնտեսության հակաճգնաժամային միջոցառումների վերաբերյալ գիտելիքներ:

**Հմտություններ՝**

- Կարողանում է դասակարգել պարբերաշրջանները,
- Տարբերում է պարբերաշրջանի փուլերը բնութագրող ցուցանիշները,
- Կարողանում է մեկնաբանել տնտեսական ճգնաժամերի առաջացման պատճառները,
- Գիտակցում է հակաճգնաժամային միջոցառումների ազդեցությունը տնտեսության վրա:

**Ունակություններ՝**

- Ունակ է տնտեսությունների անկման և վերելքի փուլերը քննարկել համապատասխան տնտեսական մոդելների միջոցով,
- Ունակ է համեմատականներ անցկացնել տարբեր երկրներում իրականացվող հակաճգնաժամային միջոցառումների միջև,
- Ունակ է տեսական գիտելիքները կիրառել տնտեսության հակաճգնաժամային միջոցառումներ մշակելիս:

**5. Առարկայի ծավալը և ուսումնական աշխատանքի տեսակները ըստ կիսամյակների (առարկան դասավանդվելու է 1 կիսամյակ)**

| Ուսումնական աշխատանքի տեսակները | Ընդամենը, ակադ. ժամեր |
|---|---|
| 1. **Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն ըստ կիսամյակների, այդ թվում.** | 144 |
| 1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում: | 36 |
| 1.1.1. Լեկցիաներ | 18 |
| 1.1.2. Պրակտիկ պարապմունքներ, այդ թվում | 18 |
| 1.1.2.1. Կիրառական նախագծերի քննարկում | |
| 1.1.2.2. Քեյսեր | |
| 1.1.2.3. Գործնական խաղեր, թրեյնինգներ | |
| 1.1.2.4. Ստուգողական աշխատանքներ | |
| 1.1.2.5. Այլ (նշել) | |
| 1.1.3. Սեմինարներ | |
| 1.1.4. Լաբորատոր աշխատանքներ | |
| 1.1.5. Այլ տեսակներ (նշել) | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում: | 108 |
| 1.2.1. Քննություններին նախապատրաստում | |
| 1.2.2. Ինքնուրույն աշխաանքի այլ տեսակներ, այդ թվում (նշել) | |
| 1.2.2.1. Գրավոր տնային աշխատանքներ | |
| 1.2.2.2. Կուրսային աշխատանքներ | |
| 1.2.2.3. Էսսե և ռեֆերատներ | |
| 1.2.2.4. Այլ (նշել) | |
| 1.3. Կոնսուլտացիաներ | |
| 1.4. Պարապմունքների այլ մեթոդներ և ձևեր | |
| Եզրափակիչ ստուգում | **Քննություն** |

## 6. Առարկայի ծավալի բաշխումն ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

| Առարկայի բաժինները և թեմաները | Ընդամենը (ակ. ժամեր) | Լեկցիա-ներ (ակ. ժամեր) | Սեմինար-ներ (ակ. ժամեր) |
|---|---|---|---|
| 1 | 2=3+4 | 3 | 4 |
| **Ներածություն** | | | |
| Թեմա 1. Տնտեսական տատանումներն ու պարբերաշրջանները որպես տնտեսական զարգացման օբյեկտիվ դրսևորումների մեթոդը | 6 | 3 | 3 |
| Թեմա 2. Տնտեսական ճգնաժամը որպես պարբերաշրջանի բեկումնային փուլ | 6 | 3 | 3 |
| Թեմա 3. Հակապարբերաշրջանային քաղաքականություն: Իրականացման արդյունքները համաշխարհային տնտեսությունում տարբեր ժամանակներում | 8 | 4 | 4 |
| Թեմա 4. 21-րդ դարի համաշխարհային ֆինանսատնտեսական, պարտքային և COVID-19 համավարակով պայմանավորված ճգնաժամերը: Հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը | 8 | 4 | 4 |
| Թեմա 5. ՀՀ տնտեսական ճգնաժամերը և հակաճգնաժամային միջոցառումները | 8 | 4 | 4 |
| **Ընդամենը** | 36 | 18 | 18 |

## 7. Առարկայի թեմաների բովանդակությունը

### *Ներածություն*

### *Թեմա 1. Տնտեսական տատանումներն ու պարբերաշրջանները որպես տնտեսական զարգացման օբյեկտիվ դրսևորումներ*

Դասական և քեյնսյան տեսակետներ տնտեսական հավասարակշռության վերաբերյալ: Ներքին և արտաքին հավասարակշռություն: Տնտեսական տատանումների առաջացման

պատճառները: Հավասարակշռության խախտման մակրոտնտեսական հետևանքները: Տնտեսական պարբերաշրջանների էությունը, բնութագիրը, դասակարգումն ըստ տևողության (Կիտչին, Ժուգլար, Կուզնեց, Կոնդրատև): Տնտեսական պարբերաշրջանի մոդելը: Ուոլտ Ռոստոուի տնտեսական աճի փուլերը: Տնտեսական պարբերաշրջանների առաջացման արտածին և ներծին ազդակների տեսությունները (թերսպառման, մարքսիստական, քեյնսյան, դրամավարկային, հոգեբանական, արեգակնային, քաղաքական գործարար, հավասարակշռված, իրական գործարար, ազդակատարածողական): Իրական տնտեսական պարբերաշրջանի մոդելը: Սամուելսոն-Հիքսի արագացուցիչ-բազմարկչի մոդելը:

**Գրականություն**


- Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում: Ուսումնական ձեռնարկ (ՀՊՏՀ, խմբ.՝ Ի.Տիգրանյան, Հ.Հովհաննիսյան.-Եր.: Տնտեսագետ, 2011, 328 էջ, գլ.3, 3.1, 3.2
- Մենքյու Ն.Գ., Մակրոէկոնոմիկա: Թարգմ.անգլերենից (Արտաքին տնտեսական կապերի և կառավարման ինստիտուտի հրատարակչություն),1997. 443 էջ, գլ.14.
- Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ.- (տ.գ.դ., պրոֆ. Հ. Բ. Ղուշչյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ), - Եր.: Տնտեսագետ, 2005, 610 էջ, գլ.5, 5.1, 5.2, 5.3
- Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում, Մենագրություն.- (տ.գ.թ., պրոֆ. Ի.Տ.Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ). - Եր.: Տնտեսագետ, 2015թ., 212 էջ, գլ.1.
- Государственное регулирование экономики: учебное пособие /С.Г.Капканщиков. - 4-е изд., перераб. и доп.-М.: КНОРУС, 2012. 528с. (Для бакалавров), гл.4.


## ***Թեմա 2. Տնտեսական ճգնաժամը որպես պարբերաշրջանի բեկումնային փուլ***

Ճգնաժամ հասկացությունը: Տնտեսական ճգնաժամերի բնույթը: Ռեցեսիա, դեպրեսիա, ստագնացիա, ստագֆլյացիա: Ճգնաժամերի տեսակները, դասակարգումը՝ ըստ հիմնախնդիրների մասշտաբների, ըստ ի հայտ գալու պարբերականության, ըստ կանխատեսելիության աստիճանի, ըստ գործընթացների խորության, ըստ ընթանալու բացության աստիճանի: Տնտեսական ճգնաժամերի էվոլյուցիան: Մեծ ճգնաժամի առաջացման պատճառները և դրսևորումները: Տնտեսական ճգնաժամերի վերաբերյալ Քեյնսյան տեսությունը: Մեծ ճգնաժամի մեկնաբանման ծախսային և փողային վարկածները: 1970-ականների խառը տնտեսությունների «էներգետիկ» ճգնաժամը և դրա մակրոտնտեսական հետևանքները: Ճգնաժամը ԽՍՀՄ-ում (1985-1991): 1990-

ականների արժութային ճգնաժամերը: Ճգնաժամերի պատճառների բացահայտման և բնույթի մեկնաբանման առաջին (Փ.Կրուգման, Ռ.Ֆլուդ, Փ.Գարբեր) և երկրորդ (Սաքս, Ա.Տորնել, Ա.Վելասո) սերնդի մոդելները:

**Գրականություն**


- Մենքյու Ն.Գ., Մակրոէկոնոմիկա: Թարգմ.անգլերենից (Արտաքին տնտեսական կապերի և կառավարման ինստիտուտի հրատարակչություն), 1997. 443 էջ, գլ.10
- Քեյնս Ջ.Մ., Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն. (Թարգմանությունը՝ տնտ.գիտ. թեկնածու Կ.Կիրակոսյանի, խմբագրությունը՝ տնտ.գիտ.դոկ., պրոֆեսոր Ա.Մարկոսյանի, տնտ.գիտ.դոկ., պրոֆեսոր Ս.Դավոյանի) Երևան: Տիգրան Մեծ, 2006թ., 392 էջ
- Бродский Б. Е., Макроэкономика: Продвинутый уповень/ Б. Е. Бродский.–М.: Магистр: ИНФРА-М, 2012.-336 с., Гл.4
- Бланшар О., Макроэкономика, Перевод с английского под научной редакцией Л.Л.Любимова, Издателский дом Государственного университета-Висшей школы экономики, Москва, 2010, 652 с., Гл. 22.


### *Թեմա 3. Հակապարբերաշրջանային քաղաքականություն: Իրականացման արդյունքները համաշխարհային տնտեսությունում տարբեր ժամանակներում*

Հակապարբերաշրջանային քաղաքականության էությունը: Կարճաժամկետ կայունացման քաղաքականություն: Հակազդում տնտեսական տատանումներին: Տնտեսության հակապարբերաշրջանային կարգավորման մոդելները: Հակապարբերաշրջանային կարգավորման հակասությունները: Քաղաքական-Տնտեսական ցիկլ: Մեծ Դեպրեսիայի հաղթահարումը: Տնտեսական հրաշքներ: Գերմանիա, Ճապոնիա, Սինգապուր: Էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը: Արժութային ճգնաժամերի հաղթահարումը:

**Գրականություն**


- Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում: Ուսումնական ձեռնարկ (ՀՊՏՀ, խմբ.՝ Ի.Տիգրանյան, Հ.Հովհաննիսյան.-Եր.: Տնտեսագետ, 2011, 328 էջ, գլ.5, գլ.6
- Տնտեսության պետական կարգավորում:Ուս.ձեռնարկ.-(Պրոֆ.Ի.Տ.Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ),-Եր.: Տնտեսագետ, 2015, 590 էջ, գլ.2.4, գլ.2.5, գլ.2.6

- Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ.- (տ.գ.դ., պրոֆ. Հ. Բ. Ղուշչյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ), - Եր.: Տնտեսագետ, 2005, 610 էջ, գլ.16.
- Государственное регулирование экономики: учебное пособие /С.Г.Капканщиков.- 4-е изд., перераб. и доп.-М.: КНОРУС, 2012.-528с.- ( Для бакалавров), гл.4, гл.5, гл.7
- Бродский Б. Е., Макроэкономика: Продвинутый уповень/ Б. Е. Бродский.–М.: Магистр: ИНФРА-М, 2012.-336 с., Гл.4.

### *Թեմա 4. 21-րդ դարի համաշխարհային ֆինանսատնտեսական, պարտքային և COVID-19 համավարակով պայմանավորված ճգնաժամերը: Հակաճգնաժամային քաղաքականության միջազգային փորձը*

Աշխարհը նախաճգնաժամային փուլում: 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամը: Ֆինանսատնտեսական ճգնաժամի փուլերը, առանձնահատկությունները, առաջացման պատճառները, բացասական դրսևորումները: Ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման միջազգային փորձը: 2009-2011թթ. հակաճգնաժամային քաղաքականությունը զարգացած և զարգացող երկրներում: Հակաճգնաժամային միջոցառումներն ըստ մակրոտնտեսական նպատակների: Աշխարհը հետճգնաժամային փուլում: Պարտքային ճգնաժամեր: Ճգնաժամերի դասերը: COVID-19 համավարակով պայմանավորված տնտեսական ճգնաժամը, հետևանքները, հաղթահարման միջոցառումները:

***Գրականություն***

- Հարությունյան Վ.Լ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր.-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 146 էջ:
- Эпоха потрясений. Проблемы и перспективы мировой финансовой системы /Алан Гринспен/ ; 2-е издание- М.: Альпина Бизнес Букс, 2009.- 520с. (Серия «Сколково»)
- Мэнкью Н.,Тейлор М., Макроэкономика.2-е изд.-СПБ.: Питер,2013.-560с., Гл.19
- Перспективы социально-экономического развития США после кризиса 2008-2009гг./Под ред.Э.В. Кириченко.-М.:ИМЭМО РАН.2012
- Е.Т.Гайдар, Кризисная экономика современной России: тенденции и перспективы, М.: Проспект, 2010.- с.23-30.

### *Թեմա 5. ՀՀ տնտեսական ճգնաժամերը և հակաճգնաժամային միջոցառումները*

ՀՀ-ում ճգնաժամի առաջացման պատճառների արտաքին և ներքին ազդակների վերլուծությունը: ՀՀ իրական և ֆինանսական հատվածների վերլուծությունը: ՀՀ

մակրոտնտեսական իրավիճակի վրա ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը: ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության գնահատման տնտեսաչափական մոդելներ: ՀՀ հակաճգնաժամային միջոցառումներն ըստ մակրոտնտեսական նպատակների: Տնտեսական աճի ապահովման համար լրացուցիչ խթանների բացահայտում: ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետությունը: ՀՀ-ն հետճգնաժամային փուլում: ՀՀ տնտեսության մակրոտնտեսական իրավիճակի և մի շարք ոլորտների վրա **COVID-19 համավարակի** ազդեցության գնահատման տնտեսաչափական մոդելների ներկայացում, մեկնաբանում և հաղթահարման ուղիների վերաբերյալ մասնագիտական քննարկումներ:

### *Գրականություն*


- Հարությունյան Վ.Լ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր.-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 146 էջ
- Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում, Մենագրություն.- (տ.գ.թ., պրոֆ.Ի.Տ.Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ).-Եր.: Տնտեսագետ, 2015թ., 212 էջ
- Ամփոփ հաշվետվություն, ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին, 2009
- Տիգրանյան Վ., Խառատյան Ա., Զբոսաշրջությունը Հայաստանում և տնտեսական աճի ու զբաղվածության վրա դրա ազդեցության գնահատումը, Եվրասիա միջազգային համալսարան, Բանբեր N 3, Երևան 2021
- Аналитический доклад «Индекс антикризисной эффективности», д.э.н., И.А. Николаев, Т.Е.Марченко, М.В.Титова, Департамент стратегического анализа, Москва, апрель 2009.
- Тигранян В.И. и другие, Антикризисная макроэкономическая политика и госдолг РА в условиях эпидемии COVID-19, Актуальные проблемы развития национальной и региональной экономики : сборник научных трудов XI Международной науч.-практ. конф. для студ., магистр., асп. и молодых ученых (Белгород, 29 апрреля 2021 г.) / под науч. ред. д-ра пед. наук, проф. Е.Н. Камышанченко, канд. экон. наук, доц. Н.П. Шалыгиной, канд. экон. наук, доц. Ю.Л. Растопчиной. – Белгород : ООО «Эпицентр», 2021. – 401 с., с.53-57
- Tigranyan V., Kharatyan A., Tourism as a factor of economic growth: an empirical analysis for Armenia, Eurasia International University, Bulletin N 2, Yerevan 2021


8.Կշիռների բաշխումը մոդուլներով և ստուգման ձևերով

| Ստուգման ձևերը | Ընթացիկ ստուգումների ձևերի կշիռները | Միջանկյալ ստուգումների ձևերի կշիռները | Միջանկյալ ստուգումների գնահատականների և ընթացիկ | Միջանկյալ ստուգումների վերջնական | Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականի |
|---|---|---|---|---|---|

| | **ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականներում** | | | **միջանկյալ ստուգումների գնահատականներում** | | | **ստուգումների ամփոփիչ գնահատականների կշիռները միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում** | | | **գնահատականների կշիռները միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականներում** | **և վերջնական ստուգման գնահատականի կշիռները վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Ուսումնական աշխատանքի/ստուգման տեսակը** | **M1**[1] | **M2** | **M3** | **M1** | **M2** | **M3** | **M1** | **M2** | **M3** | | |
| Ստուգողական աշխատանք | | | | | | | | | | | |
| Թեստ | | | | | | | | | | | |
| Կուրսային աշխատանք | | | | | | | | | | | |
| Լաբորատոր աշխատանքներ | | | | | | | | | | | |
| Գրավոր տնային աշխատանքներ | | | | | | | | | | | |
| Ռեֆերատ | | | | | | | | | | | |
| Էսսե | | | | | | | | | | | |
| *Այլ ձևեր (նշել)* | | | | | | | | | | | |
| *Այլ ձևեր (նշել)* | | | | | | | | | | | |
| Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում ընթացիկ ստուգումների ամփոփիչ գնահատականների կշիռները | | | | | | | | | | | |
| Միջանկյալ ստուգումների վերջնական գնահատականներում միջանկյալ ստուգումների գնահատականների կշիռները | | | | | | | | | | | |

[1] Ուսումնական մոդուլ

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 1-ին միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը | | | | | | | | | | | |
| Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 2-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը | | | | | | | | | | | |
| Միջանկյալ ստուգումների ամփոփիչ գնահատականում 3-րդ միջանկյալ ստուգման վերջնական գնահատականի կշիռը | | | | | | | | | | | |
| Վերջնական ստուգման ամփոփիչ գնահատականում միջանկյալ քննությունների արդյունքային գնահատականի կշիռը | | | | | | | | | | | |
| **Քննություն (Վերջնական ստուգման գնահատական)** | | | | | | | | | | | (Քննություն/ Ստուգարք) |
| | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | ∑ = 1 | **∑ = 1** |

**<u>9.Առարկայի ուսումնա-մեթոդական և նյութատեխնիկական ապահովումը.</u>**

- առարկայական ծրագիր,
- դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, թեստերի ժողովածուներ,
- Էլեկտրոնային նյութեր (Էլեկտրոնային գրքեր, ուսումնական ձեռնարկներ, լեկցիաների համառոտ կոնսպեկտներ, PPT պրեզենտացիաներ),
- անհրաժեշտ գրականության ցանկ,

- ուսանողների ինքնուրույն աշխատանքի համար հարցեր և հանձնարարություններ,
- թեստային առաջադրանքներ,
- քննական հարցաշար,
- քննական տոմսի նմուշ:

## 10.Գրականության ցանկ և տեղեկատվական ռեսուրսներ

### Հիմնական գրականություն

1. Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում, Մենագրություն.- (տ.գ.թ., պրոֆ.Ի.Տ.Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ).- Եր.: Տնտեսագետ, 2015թ., 212 էջ
2. Հարությունյան Վ.Լ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր.-Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009 146 էջ
3. Մակրոտնտեսական վերլուծություն և կանխատեսում: Ուսումնական ձեռնարկ (ՀՊՏՀ, խմբ.՝ Ի.Տիգրանյան, Հ.Հովհաննիսյան.-Եր.: Տնտեսագետ, 2011, 328 էջ
4. Մակրոտնտեսական կարգավորում: Ուս. ձեռնարկ.- (տ.գ.դ., պրոֆ. Հ. Բ. Ղուշչյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ), - Եր.: Տնտեսագետ, 2005, 610 էջ
5. Մենքյու Ն.Գ., Մակրոէկոնոմիկա: Թարգմ.անգլերենից (Արտաքին տնտեսական կապերի և կառավարման ինստիտուտի հրատարակչություն),1997. 443 էջ
6. Սամյուելսոն Փ.Ա., Նորդհաուս Ու.Դ., Տնտեսագիտություն, I, Մակրոտնտեսագիտություն- Եր., «Ապոլոն», 1995, 536 էջ
7. Տնտեսության պետական կարգավորում: Ուս.ձեռնարկ.- (Պրոֆ.Ի.Տ.Տիգրանյանի ընդհանուր խմբագրությամբ և ղեկավարությամբ),-Եր.:Տնտեսագետ, 2015, 590 էջ
8. Տիգրանյան Վ., Խառատյան Ա., Զբոսաշրջությունը Հայաստանում և տնտեսական աճի ու զբաղվածության վրա դրա ազդեցության գնահատումը, Եվրասիա միջազգային համալսարան, Բանբեր N 3, Երևան 2021
9. Քեյնս Ջ.Մ., Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն. (Թարգմանությունը՝ տնտ.գիտ. թեկնածու Կ.Կիրակոսյանի, խմբագրությունը՝ տնտ.գիտ.դոկ., պրոֆեսոր Ա.Մարկոսյանի, տնտ.գիտ.դոկ., պրոֆեսոր Ս.Դավոյանի) Երևան: Տիգրան Մեծ, 2006թ., 392 էջ
10. Ամփոփ հաշվետվություն, ՀՀ հակաճգնաժամային միջոցառումների իրականացման մասին, 2009
11. Бланшар О., Макроэкономика, Перевод с английского под научной редакцией Л.Л.Любимова, Издателский дом Государственного университета – Высшей школы экономики, Москва, 2010, 652 с.

12. Бродский Б. Е., Макроэкономика: Продвинутый уровень/ Б. Е. Бродский.–М.: Магистр: ИНФРА-М, 2012.-336 с.
13. Гайдар Е.Т., Кризисная экономика современной России: тенденции и перспективы, М.: Проспект, 2010. 656с.
14. Государственное регулирование экономики: учебное пособие /С.Г.Капканщиков.- 4-е изд., перераб. и доп.-М.: КНОРУС, 2012.-528с.- ( Для бакалавров).
15. Мэнкью Н.,Тейлор М., Макроэкономика.2-е изд.-СПБ.: Питер,2013.-560с., Гл.19
16. Перспективы социально-экономического развития США после кризиса 2008-2009гг./Под ред.Э.В. Кириченко.-М.:ИМЭМО РАН.2012
17. Эпоха потрясений. Проблемы и перспективы мировой финансовой системы /Алан Гринспен/; 2-е издание- М.: Альпина Бизнес Букс, 2009.- 520с. (Серия <<Сколково>>)
18. Аналитический доклад «Индекс антикризисной эффективности», д.э.н., И.А. Николаев, Т.Е.Марченко, М.В.Титова, Департамент стратегического анализа, Москва, апрель 2009.
19. Тигранян В.И. и другие, Антикризисная макроэкономическая политика и госдолг РА в условиях эпидемии COVID-19, Актуальные проблемы развития национальной и региональной экономики: сборник научных трудов XI Международной науч.-практ. конф. для студ., магистр., асп. и молодых ученых (Белгород, 29 апрреля 2021 г.) / под науч. ред. д-ра пед. наук, проф. Е.Н. Камышанченко, канд. экон. наук, доц. Н.П. Шалыгиной, канд. экон. наук, доц. Ю.Л. Растопчиной. – Белгород: ООО «Эпицентр», 2021. – 401 с., с.53-57
20. Tigranyan V., Kharatyan A., Tourism as a factor of economic growth: an empirical analysis for Armenia, Eurasia International University, Bulletin N 2, Yerevan 2021

**Լրացուցիչ գրականություն**

1. Սաքս Ջ.Դ., Լարրեյն Ֆ., Մակրոտնտեսագիտությունը գլոբալ տնտեսությունում, Եր., Տնտեսագետ, 2002, 598 էջ
2. Аганбегян А., Кризис: беда и шанс для России,АСТ, Астрель,Харвест: М.: 2009-147с.
3. Антипина О.Н., Макроэкономика:учебник/ О.Н.Антипина, Н.А.Миклашевская, А.А.Никифоров; под общ.ред.д-ра экон.наук, проф.А.В.Сидоровича.-М.:Издательство «Дело и Сервис», 2012. 496с. (Учебники Московского государственного университета им. М.В.Ломоносова)
4. Введение в мегаэкономику: теория, методология, практика: монография / Грант Багратян, Ирина Кравченко.- К.: УБД НБУ, 2012.158 с.
5. Мэнкью Н.Г., Принципы макроэкономики,4-е изд./Пер.с англ.-СПБ.:Питер,2012.-544с.:ил.-(Серия “Классический зарубежный учебник”)
6. Тарасевич Л.С., Гребенников П.И., Леусский А.И., Макроэкономика: учебник для бакалавров /9-е изд., испр. и доп.-М.: Издательство Юрайт, 2012. 686с. Серия: Бакалавр.Углубленный курс.

***Տեղեկատվական ռեսուրսներ***

- www.armstat.am
- www.cba.am
- www.gov.am
- www.arlis.am
- www.minfin.am
- www.imf.org
- www.worldbank.org
- www.data.worldbank.org
- http://www.ereport.ru

## 11. Քննական ամփոփ հարցաշար

### «Պետության հակապարբերաշրջանային քաղաքականություն»

1. Տնտեսական հավասարակշռության տատանումները
2. Տնտեսական պարբերաշրջանների էությունը և բնութագրերը
3. Տնտեսական պարբերաշրջանների ձևավորման մեխանիզմները
4. Տնտեսական պարբերաշրջանների դասակարգումը ըստ տևողության և բնույթի
5. Կոնդրատևի կամ Մեծ Պարբերաշրջանի էությունը
6. Արտածին ազդակներով պայմանավորված պարբերաշրջանների տեսությունների բնութագիրը
7. Ներծին ազդակներով պայմանավորված պարբերաշրջանների տեսությունների բնութագիրը
8. Թերսպառման, մարքսիստական, հավասարակշված, իրական գործարար տնտեսական պարբերաշրջանների տեսությունները
9. Տնտեսական պարբերաշրջանների կապիտալի գերկուտակման և դրամավարկային տեսությունները
10. Հոգեբանական, արեգակնային, քաղաքական գործարար, ազդակատարածողական տնտեսական պարբերաշրջանների տեսությունները
11. Պարբերաշրջանների քեյնսյան տեսության մեկնաբանումը
12. Ճգնաժամերի դասակարգումն ըստ զարգացման հիմնախնդրների
13. Ճգնաժամերի դասակարգումն ըստ հիմնախնդիրների մասշտաբների, կանխատեսման աստիճանի և գործընթացների խորության
14. Տնտեսական ճգնաժամերի էությունը
15. Տնտեսական ճգնաժամերի ձևավորման օբյեկտիվ գործոններն ըստ Քեյնսի
16. Տնտեսական ճգնաժամերի ձևավորման սուբյեկտիվ գործոններն ըստ Քեյնսի և ճգնաժամից դուրս գալու ճանապարհը
17. 1929-1933թթ. Մեծ Ճգնաժամը և հակաճգնաժամային միջոցառումները ԱՄՆ-ում
18. Մեծ Ճգնաժամի մեկնաբանման ծախսային և փողային վարկածները
19. Հակաճգնաժամային միջոցառումները հետպատերազմյան Արևմտյան Գերմանիայում
20. 1970-ականների Էներգետիկ ճգնաժամը
21. Ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները

22. Ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական դրսևորումները
23. Ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները ՀՀ-ում
24. Ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի վրա
25. Հակաճգնաժամային միջոցառումների միջազգային փորձն ըստ դրանց բնույթի
26. Հակաճգնաժամային միջոցառումների միջազգային փորձն ըստ ազդեցության ոլորտների և գործիքների
27. Հակաճգնաժամային միջոցառումների անհրաժեշտությունը ՀՀ-ում
28. Հակաճգնաժամային միջոցառումների բնույթը ՀՀ-ում
29. Հակաճգնաժամային միջոցառումների ուղղությունները ՀՀ-ում
30. Մակրոտնտեսական կայունությունն ապահովող հակաճգնաժամային միջոցառումների գործիքները
31. Կարճաժամկետ ֆիսկալ խթանումը որպես ճգնաժամի հաղթահարման հնարավորություն
32. Կարճաժամկետ մոնետար խթանումը որպես ճգնաժամի հաղթահարման հնարավորություն

## 12.Ընթացիկ և վերջնական ստուգման ձևեր.

Ընթացիկ ստուգումն անցկացվում է բանավոր հարցումների և թեստային առաջադրանքների միջոցով:
Վերջնական ստուգումն անցկացվում է գրավոր ձևով, որի համար առաջարկվում են ամբողջ կուրսն ամփոփող երկու տեսական հարց և մեկ թեստային առաջադրանք: Վերջնական ստուգման քննական տոմսերի կառուցվածքը(վերջնական ստուգման վերջնական գնահատականի մեջ համապատասխան մասնաբաժինով).

1. Տեսական հարց (40)
2. Տեսական հարց (40)
3. Թեստային առաջադրանք (20)